ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՆՎԻՐՎՈՒՄ Է Ա. ԵՍԱՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2015

ՀՏԴ 340:06
ԳՄԴ 67
Ե 540

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհուրդը

Գլխավոր խմբագիր՝
իրավ. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
պրոֆեսոր Գ.Ս. Ղազինյան

Խմբագրակազմ՝
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Հ. Գաբուզյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս.Ա. Դիլբանդյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Գ. Վաղարշյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ.Բ. Դանիելյան
իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Վ.Դ. Ավետիսյան
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Ս.Գ. Մեղրյան
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Վ.Վ. Քոչարյան

Ե 540 ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու/ ԵՊՀ; Գլխ. խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան.– Եր.: ԵՊՀ, 2015.–208 էջ:

Ժողովածուն ամփոփում է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում 2014թ. դեկտեմբերի 11-ին տեղի ունեցած գիտաժողովի նյութերը՝ նվիրված ականավոր իրավաբան Աղասի Եսայանի ծննդյան 100-ամյակին:

Այն ընդգրկում է իրավունքի գրեթե բոլոր ճյուղերի վերաբերյալ գիտական աշխատանքներ, որոնք աչքի են ընկնում բարձրացված հարցերի արդիանակությամբ, տեսական խորը վերլուծություններով և գործնական նշանակությամբ: Ժողովածուի մեջ տեղ են գտել ինչպես ճանաչված գիտնականների, այնպես էլ երիտասարդ դասախոսների ու ասպիրանտների աշխատանքները: Կարող է օգտակար լինել իրավաբան տեսաբանների, իրավաստեղծ և իրավակիրառ մարմինների ներկայացուցիչներին, իրավունքի տարբեր հարցերով հետաքրքրվողներին:

ՀՏԴ 340:06
ԳՄԴ 67

ISBN 978-5-8084-1933-9

© ԵՊՀ հրատ., 2015
© Հեղ. խումբ, 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վիգեն Քոչարյան
"PERINCEK V. SWITZERLAND"ԳՈՐԾՈՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17 ՎՃՌԻ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԿՈՂՄԵՐԸ 5

Լևոն Գևորգյան
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՏՅԱՆՆԵՐԻ ՉԱՐԱՇԱՀՈՒՄԸ ԵՎ ՉԻՐԱԳՈՎՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԸ 18

Անի Սիմոնյան
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 25

Արթուր Վաղարշյան
ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 35

Տարոն Սիմոնյան
ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԱՆԿԱՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈՐՈՇԱԿԻԱՑՄԱՆ ՀԱՄԱԼԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՐԱՆՈՒՄ ՆԿԱՏԵԼԻ ՈՐՈՇ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐ 56

Ալվարդ Ալեքսանյան
ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ 68

Նարինե Դավթյան
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԻ ՓՈՒԼԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 87

Գևորգ Դանիելյան
ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ 98

Վարդան Այվազյան

ԿՈՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼԻԶՄԻ (ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ) ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 124

Անահիտ Մանասյան
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԻ ԻՐԱՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 140

Արա Գաբուզյան
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ՝ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐ 149

Սամվել Դիլբանդյան
ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՏԱԼՍՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ 160

Аида Искоян
ФОРМИРОВАНИЕ И РАЗВИТИЕ ЭКОЛОГИЧЕСКОГО ПРАВА: МЕЖДУНАРОДНЫЕ И НАЦИОНАЛЬНЫЕ ПРЕДПОСЫЛКИ 174

Գրիգոր Բեքմեզյան
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ 190

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ. ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Աիդա Իսկոյան
ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի պրոֆեսոր, իրավ. գիտ. թեկնածու

Հոդվածը նվիրված է շրջակա միջավայրի պահպանությանը, ինչպես միջազգային իրավունքի, այնպես էլ այդ ոլորտի ազգային իրավունքի և օրենսդրության զարգացմանը: Աշխատանքում նշվում է բնագիտական ուսումնասիրությունների արդյունքների օգտագործումը այդ ոլորտի միջազգային իրավական նորմերում:

FORMATION AND DEVELOPMENT OF ENVIRONMENTAL LAW. NATIONAL AND INTERNATIONAL BACKGROUNDS

Aida Iskoyan
Professor of the YSU Chair of Civil Procedure, Candidate of Legal Sciences

The article is dedicated to protecting the environment, both in the sphere of international law and national legislation on law development. The author mentions the use of natural sciences outcomes in international legal norms.

Բանալի բառեր՝ *միջազգային իրավունք, միջազգային էկոլոգիական իրավունք, շրջակա միջավայրի պահպանություն, շրջակա միջավայրի պահպանության և բարելավման գիտական վերլուծություն, շրջակա միջավայրի պահպանության միջազգային իրավունքի բովանդակություն:*

Ключевые слова: *международное право, международное экологическое право, охрана окружающей среды, наука о сохранении и улучшении окружающей среды, содержание международного права охраны окружающей среды.*

Keywords: *international law, international environmental law, environmental protection, environmental protection and improvement of scientific analysis, the content of international law protection of the environment.*

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Գրիգոր Բեքմեզյան
ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու

Դելիկտային պարտավորություններում պատճառված վնասի համար պատասխանատվության առաջացման առաջին պայմանը վնասի առկայությունն է: Իրավաբանական գրականության մեջ դեռևս տրված չէ վնասի միասնական բնորոշումը: Համաձայն Պ. Կեյնի՝ վնասը հայցվորի գործողությունների էությունն է, որը, ըստ հեղինակի, նշանակում է, որ մինչև տուժողը չունենա որոշակի ֆինանսական կամ առողջական կորուստ, նա ի վիճակի չի լինի վնասի հատուցում պահանջել պատասխանողից[1]: Գ. Ղարախանյանը, Ե.Ա. Ֆլեյշիցը, Ա.Մ. Բելյակովան վնասը բնորոշում են որպես անբարենպաստ բացասական հետևանք, որ վրա է հասնում օրենքով պահպանվող գույքային իրավունքի կամ ոչ նյութական բարիքի խախտման դեպքում[2]: Ն.Ս. Մալեինի կարծիքով վնասը սոցիալական հասկացություն է: Իսկ ավելի ընդհանուր առումով, ըստ հեղինակի, վնասը կարող է բնորոշվել որպես օրենքով պահպանվող պետության, կազմակերպությունների և քաղաքացիների իրավունքների ու շահերի ոտնահարման կամ խախտման հետևանք[3]: ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը վնաս է բնորոշում է որպես իրավունքը

[1] Տե՛ս Peter Cane, “The Anatomy of Tort Law” Hart Publishing, Oxford, 1997, էջ 89:

[2] Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Երկրորդ մաս, էջ 603, Флейшиц Е.А., Обязательства из причинения вреда и из неосновательного обогащения. М. 1951г. էջ 20, Белякова А.М., Имущественная ответственность за причинение вреда. М. Юрид. Лит., 1979,яէջя 7:

[3] Տե՛ս Малеин Н.С. Возмещение вреда, причиненного личности. М.я1965,яէջя5:

խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), ինչպես նաև ոչ նյութական վնասը:

Պետք է նշել, որ վնասը լինում է երկու տեսակ՝ նյութական և ոչ նյութական: Նյութական վնասը այն է, որը կարելի է հաշվել, իսկ ոչ նյութականը հաշվել անհնար է: Նյութական վնասի դեպքում տուժողը կարող է կորցնել աշխատավարձը, աշխատունակությունը, լրացուցիչ ծախսեր կատարել բուժման, դեղեր գնելու, առողջարանային բուժման և այլ նպատակներով, կերակրողին կորցնելու դեպքում առաջանում են թաղման ծախսեր. փոխհատուցվում է կերակրողին կորցնելու հետևանքով ծագած վնասը[1]: Եթե վնասը պատճառվել է գույքին, ապա տուժողը կարող է պահանջել հատուցել գույքը վերականգնելուն ուղղված վնասները կամ գույքը փոխարինելու համար կատարվող ծախսերը և այլն: Եթե վնասը չի կարող գնահատվել դրամական ձևով, ապա այն դառնում է ոչ նյութական կամ ոչ գույքային վնաս:

Մինչև 2014 թվականը ՀՀ քաղաքացիական օրենսգրքում բացակայում էր ոչ նյութական վնասի հասկացությունը, չնայած այն հանգամանքին, որ 2010 թվականից պատվի, արժանապատվության և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման տեսանկյունից, առանց որպես այդպիսի ձևակերպման, այն գործում էր օրենսգրքում[2]: Այնուամենայնիվ հարկ է նաև նկատել, որ ոչ նյութական վնասի կամ բարոյական վնասի ինստիտուտը իրականում ամրագրված է եղել ՀՀ օրենսդրությամբ: Մասնավորապես բարոյական վնասի հատուցում է նախատեսված Գովազդի մասին ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի գ) ենթակետում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 268-րդ հոդվածում:

[1] Տե՛ս ՀՀ Քաղ. օր., հոդվածներ 1078, 1079, 1080, 1081, 1082, 1083, 1084, 1087:
[2] Տե՛ս Քաղաքացիական իրավունք, 3-րդ, 4-րդ մասեր, Երևան 2011, էջ 66:

«Բարոյական վնաս» եզրույթն ամրագրված է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մի շարք դրույթներում, մասնավորապես՝ 6-րդ հոդվածի 45-րդ կետում, որում «վնաս» եզրույթը դիտարկվում է որպես «դրամական չափման ենթակա բարոյական, ֆիզիկական, գույքային վնաս»: Նույն օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասը, սահմանելով «տուժող» հասկացությունը, ամրագրում է, որ՝ «Տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: Տուժող է ճանաչվում նաև այն անձը, ում կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը»:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի՝ «Ոչ գույքային վնասի հատուցման հիմքերը և կարգը» վերտառությամբ 104-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Ոչ իրավաչափ վարչարարությամբ ֆիզիկական անձի ազատությունը սահմանափակելու, նրա անձեռնմխելիությունը, բնակարանի անձեռնմխելիությունը, անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը խախտելու, նրա պատիվը, բարի համբավը կամ արժանապատվությունն արատավորելու միջոցով ոչ գույքային վնաս պատճառելու դեպքերում այդ անձն իրավունք ունի պահանջելու դրամական միջոցներով հատուցում կամ առաջացած հետևանքների վերացում՝ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ գույքային վնասին համարժեք չափով»:

Վերոնշյալ իրավական ակտերի մի մասը, օրինակ՝ Գովազդի մասին օրենքը և Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգիրքը, բարոյական վնասի մասին դրույթները ներառել են մինչև 1998թ Քաղ. օր. ընդունումը, և մեր կարծիքով բարոյական վնասի հատուցման դրույթները ուղղակի մեխանիկորեն մնացել են օրենքներում, սակայն պրակտիկ կիրառություն չեն ունեցել:

Ոչ նյութական վնասի հատուցում է նախատեսված նաև ֆինանսական օրենսդրությամբ, օրինակ՝ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքը նախատեսում է, որ կրեդիտավորողի ծառայություններից օգտվող սպառողի իրավունքների խախտման փաստը հաստատվելու դեպքում դատարանի վճռով կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշմամբ հօգուտ սպառողի բռնագանձվում է երեք հարյուր հազար դրամ[1]:

Ինչպես նշվեց 2014 թվականից ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտը պաշտոնապես ներառվել է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգիրք:

Մասնավորապես ՀՀ քաղ օր. 17-րդ հոդվածի 2-րդ մասի փոփոխության համաձայն՝ վնասներ են ինչպես իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), այնպես էլ ոչ նյութական վնասը: Նույն 17-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանափակում է ոչ նյութական վնասի հատուցման դեպքերը՝ սահմանելով, որ ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման միայն օրենսգրքով նախատեսված դեպքերում:

Քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է նաև ոչ նյութական վնասի հասկացությունը և դրա հատուցման սկզբունքները: Օրենսգրքի 162.1 հոդվածի համաձայն.

«1. Սույն օրենսգրքի իմաստով ոչ նյութական վնասը ֆիզիկական կամ հոգեկան տառապանք է, որն առաջացել է անձին ի ծնե կամ օրենքի ուժով պատկանող ոչ նյութական բարիքների դեմ ոտնձգող կամ նրա անձնական ոչ գույքային իրավունքները խախտող որոշմամբ, գործողությամբ կամ անգործությամբ:

[1] Տե՛ս 2008թ. «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենք , հ. 20:

2. Եթե դատական կարգով հաստատվել է, որ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով ֆիզիկական անձի նկատմամբ թույլ է տրվել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 2-րդ, 3-րդ կամ 5-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների խախտում (սույն օրենսգրքի իմաստով՝ կոնվենցիոն իրավունքների խախտում), ապա այդ անձը, իսկ նրա մահվան կամ անգործունակության դեպքում նրա ամուսինը, ծնողը, որդեգրողը, երեխան, որդեգրվածը, խնամակալն իրավունք ունեն դատական կարգով պահանջելու պատճառված ոչ նյութական վնասի հատուցում:

3. Եթե դատապարտյալն արդարացվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային կից թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածով նախատեսված պայմաններում, ապա նա իրավունք ունի դատական կարգով պահանջելու իրեն պատճառված ոչ նյութական վնասի հատուցում (սույն օրենսգրքի իմաստով՝ հատուցում անարդարացի դատապարտման համար):

4. Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասը հատուցվում է սույն օրենսգրքի 1087.1 հոդվածով, իսկ կոնվենցիոն իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասը՝ 1087.2 հոդվածով սահմանված կարգին և պայմաններին համապատասխան»:

Այսպիսով՝ ակնհայտ է, որ չնայած օրենսգրքով արդեն իսկ նախատեսվում է ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտը, որը գովելի է, նույն օրենսգրքով կտրուկ սահմանափակվում են դրա կիրառման սահմանները, ինչը մեր կարծիքով բացասական մոտեցում է: Ստացվում է, որ ոչ նյութական վնասի հատուցում է նախատեսվում միայն օրենսգրքի 1087.1 հոդվածով՝ պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի

համար և 1087.2 հոդվածով՝ կոնվենցիոն իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի համար: Ըստ էության նման ձևակերպմամբ օրենսգիրքը սահմանափակում է նաև անձանց իրավունքը՝ պահանջել ոչ նյութական վնասի հատուցում այլ իրավական ակտերի, օրինակ՝ Գովազդի մասին օրենքի շրջանակներում: Սա, մեր կարծիքով, սխալ և չհիմնավորված մոտեցում է, քանի որ արհեստականորեն ստեղծվում է իրավական անհամաձայնություն իրավական տարբեր ակտերի միջև, երբ մի օրենքով՝ Գովազդի մասին օրենքով, նախատեսվում է ոչ նյութական վնասի հատուցում, մյուսով՝ Քաղաքացիական օրենսգրքով, չնայած նույնպես նախատեսվում է ոչ նյութական վնասի հատուցում, նախատեսվում է անբարեխիղճ գովազդի հետևանքով պատճառված վնասի հատուցում, սակայն միևնույն ժամանակ սահմանափակվում է ոչ նյութական վնասի հատուցումը միայն Օրենսգրքի շրջանակներում, որում, ինչպես նշեցինք, ոչ նյութական վնասի հատուցում է նախատեսվում միայն երկու հոդվածներով:

Գտնում ենք, որ Քաղաքացիական օրենսգրքի վերոնշյալ իրավակարգավորումները չեն ապահովում և երաշխավորում ՀՀ-ում ոչ նյութական վնասի ամբողջական հատուցում՝ դրանով իսկ սահմանափակելով անձանց ամբողջական և բավարար վնասի հատուցում ստանալու հնարավորությունը, մասնավորապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին ժամանակներս բավականին շատացել են արտադրողների, ապրանքներ վաճառողների, ծառայություններ մատուցողների կողմից սպառողներին անորակ ապրանքներ վաճառելու կամ անորակ ծառայություններ մատուցելու հետևանքով պատճառվող համատարած վնասի դեպքերը, ֆինանսական կազմակերպությունների կողմից սպառողներին մատուցվող ծառայությունների ընթացքում կազմակերպությունների կողմից իրենց իրավունքների չարաշահման կամ պարտականությունների թերի կատարման հետևանքով անձանց պատճառվող վնասների դեպքերը, որոնք չնչին նյութական վնասի հետ մեկտեղ կարող են առաջացնել էական անհանգստություններ, զրկանքներ, այսինքն՝ ոչ նյութական վնաս: Որպես օրինակ կարելի է նշել բանկերի կողմից դատական ակտերի հարկադիր կատարողի կողմից որոշված արգելադրման ենթակա գումարի փոխարեն անձի ողջ դրամական միջոցների վրա արգելանքի դնումը, որի հետևանքով անձը զրկվում է իրեն պատկանող ողջ դրամական միջոցներից օգտվելու հնարավորությունից, կամ ապահովագրական ընկերությունների կողմից ապահովագրական հատուցումների տրամադրման արհեստական ձգձգումները, ինչպես նաև կարելի է նշել ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների, անբարեխիղճ գովազդի արդյունքում պատճառված վնասների հետևանքով կրած ոչ նյութական զրկանքները:

Հաշվի անելով այս ամենը՝ գտնում ենք, որ օրենսգրքի ներկայիս կարգավորումը խիստ թերի է: Մասնավորապես մեր կարծիքով ոչ նյութական վնասի հատուցման սահմանումը խիստ սահմանափակ դեպքերի համար, այն էլ բավական սիմվոլիկ գումարով, չի բխում արդարության շահերից, ինչպես նաև չի ապահովում տուժողներին պատճառված վնասի ամբողջական հատուցում: Նման կարգը չի ապահովում նաև վնասի հատուցման ինստիտուտի կանխարգելիչ բնույթը:

Կարծում ենք՝ ժամանակն է ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ ընդլայնել ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտը՝ ամբողջական ներառելով նաև ոչ նյութական վնասի կամ կանխարգելիչ վնասի հատուցումը:

Կանխարգելիչ վնասը, կամ ինչպես ԱՄՆ-ում են այն անվանում «Punitive damage», այսինքն՝ պատժիչ վնաս, իրենից ենթադրում է գումարային հատուցում, որը շնորհվում է տուժողին, և որը դուրս է վնասի պատճառման արդյունքում վերջինիս կրած իրական

վնասներից, և որի նպատակը իրավախախտին պատժելն է[1]: Ինչպես ակնհայտ է ձևակերպումից, և ինչպես կտեսնենք ստորև, պատժիչ վնասի առանձնահատկություններից մեկն է այն, որ ոչ նյութական վնասի հատուցումը, որը նման է նաև տուգանքի և ունի կանխարգելիչ-պատժիչ բնույթ, գերազանցում է պատճառված իրական վնասի չափը և վճարվում է անմիջապես տուժողին:

Ընդհանուր առմամբ պատժիչ վնասները՝ որպես վնասի հատուցման բացառիկ տեսակ, կարող են շնորհվել դատարանի կողմից իրական վնասների հետ միաժամանակ, որի նպատակն է նաև հատուցել տուժողին պատճառված զրկանքների համար[2]: Պատժիչ վնասը վնաս պատճառողին պատժելու միջոց է քաղաքացիաիրավական գործի շրջանակներում և հիմնվում է այն տեսության վրա, որ տուժած անհատի և հասարակության շահերը կարող են ավելի ռեալ պաշտպանվել, եթե լրացուցիչ ֆինանսական պարտավորություն դրվի իրավախախտի վրա: Վնասի այս տեսակի նպատակն է նաև ակնհայտ կոպիտ իրավախախտման համար պատասխանողին պատժելով կանխարգելել վերջինիս և այլ հնարավոր իրավախախտների կողմից նմանատիպ վնասի պատճառումը:

Պատժիչ վնասը՝ որպես քաղաքացիաիրավական պատասխանատվության տեսակ, առաջին անգամ կիրառվել է Անգլիայում 1763 թվականին, որից հետո անմիջապես կիրառություն է ստացել նաև ամերիկյան գաղութներում: Մինչև 1850-ական թվականները պատժիչ վնասը դարձավ անգլո-ամերիկյան քաղաքացիական իրավունքի բաղկացուցիչ մաս[3]:

Հաշվի առնելով պատժիչ վնասի հատուցման առանձնահատկությունները՝ շատ կարևոր է հստակ ամրագրել այն հստակ չափանիշները, երբ կարող է տրվել պատժիչ վնասի հատուցումը:

[1] Տե՛ս http://legal-dictionary.thefreedictionary.com/punitive+damages
[2] Տե՛ս http://legal-dictionary.thefreedictionary.com/punitive+damages, http://verdict.justia.com/2013/04/08/the-constitution-and-punitive-damages;
[3] Տե՛ս http://legal-dictionary.thefreedictionary.com/punitive+damages:

Դրանց թվում կարելի է նշել իրավունքի կոպիտ չարաշահումը, անբարեխղճությունը, խաբեությունը, բռնությունը, արարքի կամ իրավունքի խախտման հասարակական վտանգավորությունը և այլն: Ընդ որում՝ թվարկվածները պետք է զուգորդվեն վնաս պատճառողի կողմից դիտավորյալ գործողություններով կամ կոպիտ անզգուշությամբ: Կարծում ենք՝ պատժիչ վնասը պետք է շնորհվի միայն դատարանների կողմից և միմիայն այն դեպքում, եթե շնորհվել է նաև իրական վնասների հատուցում կամ մեկ այլ դատավարական կարգով ապացուցվել է պատասխանողի դիտավորությամբ կամ կոպիտ անզգուշությամբ տուժողի իրավունքի խախտումը:

Պատժիչ վնասների հարցը ամերիկյան իրավական պրակտիկայում միշտ էլ եղել է վիճահարույց: Տուժող հայցվորները և նրանց փաստաբանները հաճախ են ձգտում ստանալ պատժիչ վնասի հատուցում ծառայություններ մատուցող կամ ապրանքներ արտադրող ընկերություններից, իսկ պատասխանողները, որպես կանոն հատուցման այս տեսակը դիտում են որպես ոչ համարժեք, որը ծանրացուցիչ բեռ է դնում նրանց ուսերին: Նրանք պնդում են, որ պատժիչ վնասները անարդար են, անկանխատեսելի և հաճախ չափազանցված, որի արդյունքում հայցվորները ստանում են ֆինանսական տեսանկյունից գրավիչ, սակայն անհիմն չափով մեծ վնասների հատուցում:

Պատժիչ վնասի կողմնակիցները նշում են, որ վնասների այս տեսակը իրականացնում է մի շարք սոցիալական գործոններ, ներառյալ հատուցում, կանխարգելում, զսպում և իրավունքի գերակայություն[1]:

Պատժիչ վնասի առանձնահատկությունն այն որ այն նպատակ ունի կանխել նույն սուբյեկտի կամ նմանատիպ գործունեություն իրականացնող այլ սուբյեկտների կողմից նույնատեսակ խախտումները հետագայում: Անվիճելի է, որ վնասի հատուցման այս տեսակը ունի նաև հատուցման բնույթ: Հաճախ տուժողները նյութական

[1] Տե՛ս նշվ. աշխ., նույն էջը:

վնասից բացի կրում են նաև ոչ նյութական վնասներ, որոնց հաշվարկը խիստ դժվարին է, սակայն դրանց առկայությունը՝ ակնհայտ: Նման վնասների հատուցմանն է ուղղված պատժիչ վնասը, քանի որ միայն նյութական վնասի հատուցումը, որը որոշ դեպքերում կարող է լինել շատ չնչին, չի կարող ապահովել տուժողի կրած ողջ զրկանքների ամբողջական հատուցումը: Անհնար է գնահատել վնասի չափը այն դեպքում, երբ անօրինական կերպով արգելափակվել են քո բանկային հաշիվները, և դու չես կարողացել վճարել քո կողմից հրավիրված և քո ապագա գործընկերների համար կազմակերպված կորպորատիվ կամ գործնական ընթրիքի համար: Նման դեպքում ընթրիքի համար կարող է վճարել հրավիրվածներից մեկը, կամ կարող ես փորձել կանխիկ վճարել, որը կարող է և մոտդ չլինել: Իրականում վնասի մասին խոսելը այստեղ դժվար է: Սակայն արդյո՞ք վնաս չէ ապագա գործընկերոջ մոտ խայտառակ լինելը, երբ մատուցողն ասում է, որ «Ձեր բանկային քարտն արգելափակված է»: Ինչպե՞ս բացատրես, որ դու ունես բավարար դրամական միջոցներ քո քարտի վրա, դու չես խախտել բանկի հետ ոչ մի պայմանագրային դրույթ, ուղղակի բանկը իր հեշտության կամ ինչ-որ մի աշխատողի անփութության, կամ ցանկացած այլ ոչ օրինական հիմքով որոշել է արգելափակել քո բոլոր հաշիվները:

Պատժիչ վնասի կողմնակիցները որպես կարևոր դրական կողմ նշում են, որ վնասի հատուցման այս տեսակը կարող է նպաստել օրենքի գերակայության հաստատմանը: Այս հանգամանքը հիմնավորվում է նրանով, որ առանց խոշոր հատուցում ստանալու հնարավորության տուժողները հաճախ կխուսափեն իրենց իրավունքները պաշտպանելու համար պատկան մարմիններին դիմելուց: Իսկ հատուցման ավելի արդյունավետ միջոցները նպաստում են անձանց մոտ իրավագիտակցության բարձրացմանը և նպաստում, որ վերջիններս քայլեր ձեռնարկեն խախտված իրավունքների ռեալ պաշտպանության ուղղությամբ[1]: Ասվածի հետ չի կարելի

[1] Տե՛ս http://legal-dictionary.thefreedictionary.com/punitive+damages:

չհամաձայնվել: ՀՀ դատահիրավական պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ անկախ իրավախախտման բնույթից և վտանգավորության աստիճանից, եթե պատճառված վնասը խոշոր չէ, տուժողները խուսափում են իրենց իրավունքների պաշտպանության հայցով դատարան դիմելուց: Սրա հիմնական պատճառներից մեկն էլ այն է, որ վնասի հատուցման հարցով դատական գործընթացները, որպես կանոն, ժամանակատար և ծախսատար են: Այդ ծախսերի մի ահռելի մասը բաժին է հասնում փաստաբանական ծառայություններին: Սակայն քիչ հավանական է, և գրեթե անհավանական է, որ 50000 ՀՀ դրամի վնասի հատուցման համար, դատարանը բավարարի փաստաբանին վճարված ծառայության վճարը, օրինակ 300000 ՀՀ դրամի չափով: Այնինչ ցանկացած պրակտիկ իրավաբան կասի, որ մեկ տարի տևող բարդ դատական գործընթացի համար 300000 ՀՀ դրամ հոնորարը մեծ գումար չէ: Նույնիսկ ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ. թիվ 33/3-Լ որոշմամբ հաստատված ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԳՆԱՑՈՒՑԱԿ-ում վնասը և բաց թողնված օգուտը հատուցելու, մասնավորապես կյանքին և առողջությանը պատճառված վնասը հատուցելու, ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների թերությունների հետևանքով պատճառված վնասը հատուցելու, հանցագործությամբ պատճառված վնասը հատուցելու և վարչարարությամբ պատճառված վնասը հատուցելու համար հոնորարի ուղենիշ է սահմանված բռնագանձման ենթակա գումարի 5%-ի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 100-ապատիկի չափից[1]: Ակնհայտ է, որ նման պայմաններում տուժողներից շատերը կնախընտրեն մնալ առանց պատճառված վնասի հատուցման, քան կրկնակի կամ եռակի ավել ծախս

[1] Տե՛ս ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ. թիվ 33/3-Լ որոշմամբ հաստատված ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԳՆԱՑՈՒՑԱԿ, կետ 2:

կատարելով՝ ստանան վնասի սահմանափակ հատուցում:

Պատժիչ վնասի հակառակորդները նշում են, որ խոշոր հատուցման սահմանումը արդար չէ, անհիմն է և արդյունավետ չէ հասարակության համար: Քննադատության հիմնական հիմնավորումներից է այն, որ նման վնասի հատուցումը կվազի-քրեական է, չնայած այն հատուցվում է քաղաքացիական հայցի շրջանակներում[1]:

Հաջորդ փաստարկն այն է, որ տուժողները ստանում են բավականին խոշոր շահույթ, ինչն անարդար է հասարակության մյուս անդամների նկատմամբ: Վիճարկվում է նաև այն հանգամանքը, որ պետական մարմինների կողմից պատճառված վնասի դեպքում պատժիչ վնասի հատուցումը ծանր բեռ է հարկատուների համար[2]:

Իհարկե, վերոնշյալ կարծիքները ունեն իրենց տրամաբանությունը, սակայն դրանք չեն բացառում պատժիչ վնասի ինստիտուտի կիրառումը Հայաստանում, քանի որ դրա ներմուծումը մեր օրենսդրություն չի նշանակում անգլոամերիկյան պատժիչ վնասի բացարձակ նույնությամբ կիրառում: Դեռ ավելին, այս ինստիտուտը արդեն իսկ բավական փոփոխություններ է կրել Միացյալ Նահանգների դատական համակարգում ԱՄՆ Գերագույն դատարանի նախադեպային որոշումների արդյունքում, որոնց նպատակն է ավելի կանոնակարգել և հստակեցնել պատժիչ վնասի հաշվարկման չափերի որոշումը[3]:

Կարևոր է նշել, որ պատժիչ վնասը՝ որպես վնասի հատուցման տեսակ, բացակայում է եվրոպական մի շարք առաջատար երկրների օրենսդրություններում, մասնավորապես՝ Ավստրիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Դանիայում, Ֆինլանդիայում և

[1] http://verdict.justia.com/2013/04/08/the-constitution-and-punitive-damages, http://www.biztositasiszemle.hu/files/201206/punitive_damage_in_europe.pdf:
[2] Տե՛ս http://legal-dictionary.thefreedictionary.com/punitive+damages:
[3] Տե՛ս State Farm Mutual Automobile Insurance Co. v. Campbell, https://supreme.justia.com/cases/federal/us/538/408/case.html:

այլն:

Բայց և այնպես հարկ է նկատել նաև, որ, չնայած նշված երկրներում բացակայում է պատժիչ վնասի հատուցման ինստիտուտը, սակայն այդ երկրներից շատերի օրենսդրությունները պարունակում են նորմեր, որոնք նման են պատժիչ վնասին: Օրինակ՝ ֆրանսիական ապահովագրական օրենսդրությամբ գործում է «ապահովագրողի անբարեխղճություն» հասկացությունը, որը ենթադրում է, որ այն դեպքում, եթե ապահովագրողը ձախողում է ժամանակին արձագանքել ապահովագրական պոլիսի համաձայն վճարման ենթակա հատուցմանը, ապա պարտավոր է վճարել հատուցման կրկնակին[1]: Դեռ ավելին, Ֆրանսիայի Վճռաբեկ դատարանը նույնիսկ ճանաչել է ԱՄՆ-ում կայացված դատական ակտը, որը սահմանում էր պատժիչ վնասի հատուցում, սակայն միաժամանակ մերժել է վճռի կատարումը, քանի որ գտել է, որ պատժիչ վնասը համաչափ չէ իրական վնասների հետ[2]:

Գերմանական արդարադատությունը նույնպես ապահովագրողների կողմից անբարեխղճության դեպքում նախատեսում է վնասների հատուցման գումարի ավելացում: Այս դեպքում անբարեխղճությունը արտահայտվում է գործընթացների ձգձգմամբ, կեղծ մեղադրանքներով, տուժողի կամ երրորդ անձի անտեղի և շատ ազդեցությամբ, որոնց ժամանակ պատժիչ վնասները կարող են գերազանցել ընդհանուր վնասների 10 կամ 100 տոկոսը[3]:

Ի տարբերություն Ֆրանսիայի և Գերմանիայի՝ Իռլանդիան մասնավոր իրավունքի երկիր է: Մասնավոր իրավունքի տեսանկյունից պատժիչ վնասների կիրառումը սահմանադրական իրավունքների խախտման կամ դելիկտային պարտավորությունների համար չի բացառվում[4]:

[1] http://www.biztositasiszemle.hu/files/201206/punitive_damage_in_europe.pdf
[2] Տե՛ս նույն էջը:
[3] Տե՛ս Court of Appeal/OLG Frankfurt, 12-U 7/98, NJW 1999, 2447:
[4] Տե՛ս Քաղաքացիական պատասխանատվությունների 1961թ. ակտը:

Չնայած պատժիչ վնասը չի նախատեսվում հոլանդական օրենսդրությամբ, սակայն հոլանդական քաղաքացիական օրենսգիրքը դատարաններին տալիս է հատուցման գումարի սահմանման ճկունություն: Մասնավորապես դատավորը կարող է վնասների չափը գնահատել այն եկամուտի համեմատ, որը ստացել է վնաս պատճառողը, ինչը կարող է բերել նրան, որ վնասի հատուցման գումարը ավելի լինի, քան իրական պատճառված վնասը[1]:

Անգլիական օրենսդրությունը իրական վնասների հատուցման հետ մեկտեղ նախատեսում է նաև պատժիչ վնասի հատուցումը, որը կոչվում է նաև վնասի հատուցման գումարի ավելացում: Ամեն դեպքում 1964թ.-ին Ռուկերսն ընդդեմ Բերնարդի գործով Լորդերի պալատը սահմանել է, որ պատժիչ վնասը կարող է թույլատրվել միայն բացառիկ դեպքերում: Այս որոշման համաձայն պատժիչ վնասները կիրառվում են միայն երեք դեպքում՝

Ա/ պետական ծառայողների դաժան, կամայական կամ ոչ սահմանադրական գործողություններով պատճառված վնասի դեպքում: Ընդ որում պետական ծառայողների թվին են դասվում նաև արքունի ծառայողները, ոստիկանության, պետական կամ այլ պաշտոնյաները:

Բ/ Այնպիսի գործողության դեպքում, որն ուղղված է շահույթի ստացմանը, երբ նման շահույթը կարող է գերազանցել տուժողին վճարված հատուցումը:

Գ/ Օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում[2]:

Իհարկե, միանշանակ պնդել, որ պատժիչ վնասը այնպես, ինչպես որ գործում է Միացյալ Նահանգներում, պետք է ներառվի մեր օրենսդրության մեջ, սխալ է: Սակայն հաշվի առնելով մեր իրականությունը, նպատակ ունենալով ավելի ռեալ դարձնել խախտված իրավունքների դեպքում տուժողների շահերի ամբողջական պաշտպանությունը, նկատի ունենալով եվրոպական երկրների ու ամերիկյան իրավակիրառ փորձը՝ կարծում ենք՝ նպատակահարմար կլինի ՀՀ օրենսդրություն ներառել այնպիսի վնասի ինստիտուտ, որը կլինի պատժիչ և կոմպենսացիոն վնասների միաձուլումը և ուղղված կլինի ոչ նյութական վնասի հատուցմանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վնասի հատուցման ինստիտուտի հիմնական նպատակներից մեկն էլ վնասի պատճառման կանխումն է, կառաջարկենք նոր վնասի ինստիտուտը անվանել՝ կանխարգելիչ վնաս:

Կարևոր ենք համարում նշել այն, որ կանխարգելիչ վնասի հատուցման համար պետք է հիմք հանդիսանա միայն վնաս պատճառողի մոտ դիտավորությունը կամ կոպիտ անզգուշությունը: Կանխարգելիչ վնասի հատուցում շնորհելու համար պետք է հաշվի առնվի իրավախախտման բնույթը, վտանգավորությունը, հասարակական հնչեղությունը, արարքի տնտեսական բացասական արժեքը, այն, թե ինչ եկամուտ է ստացել դրանից իրավախախտը և այլն[1]:

Կանխարգելիչ վնասի հատուցման հիմնական խնդիրներից է նաև վնասի հատուցման չափի որոշումը: Կարծում ենք՝ դատարաններին ոչ թե պետք է հնարավորություն տալ իրենց հայեցողությամբ շնորհել ցանկացած գումար, այլ օրենսդրորեն հստակ ամրակցել այն գումարային սահմանները, որոնց սահմաններում դատարանները, հաշվի առնելով իրավախախտման բնույթն ու վերոնշյալ մյուս հանգամանքները, կսահմանեն վնասի հատուցման չափը:

[1] http://www.biztositasiszemle.hu/files/201206/punitive_damage_in_europe.pdf
[2] http://www.biztositasiszemle.hu/files/201206/punitive_damage_in_europe.pdf

[1] Տե՛ս http://lawbrain.com/wiki/Punitive_Damages:

О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ ВОЗМЕЩЕНИЯ НЕМАТЕРИАЛЬНОГО ВРЕДА ПО ГРАЖДАНСКОМУ КОДЕКСУ РА

Григор Бекмезян
Доцент кафедры гражданского права ЕГУ,
кандидат юридических наук

В статье автор исследует возможность полного внедрения в Гражданский кодекс Республики Армения института возмещения нематериального вреда. Автор анализирует произведенные изменения ГК РА, касающиеся обсуждаемого вопроса, где подвергается критике половинчатость произведенных изменений, констатируется сам факт введения института нематериального вреда в ГК, однако узкий круг его применения не дает гарантии применения этого институте в полном обьеме. Особое внимание уделяется возможности внедрения в ГК нового вида вреда как иститут карательного ущерба (Punitive damage) в англо-американском праве. Автор в сравнительном анализе изучает особеннсти института карательного ущерба и его применения как в США, так и в европейских странах. В результате исследования делается вывод, что идентичное внедрение карательного вреда в ГК РА нецелесообразно, но внедрение превентивного вреда, который по своей сущности будет схож с институтом карательного вреда. Возможно вместе с тем этот институт будет различаться тем, что по закону четко будут урегулированы все возможные пределы и размеры применения судами превентивного вреда.

SOME ISSUES OF NON-MATERIAL DAMAGES UNDER THE CIVIL CODE

Grigor Bekmezyan
Docent of the YSU Chair of Civil Law,
Candidate of Legal Sciences

The author explores the possibility of full implementation into the Civil Code of the Republic of Armenia institute of reimbursement of non-material damage. The author analyzes the changes of RA Civil Code relating to the subject matter, where the existing changes are being critisized. It is stated, that although the institution of non-material damage is introduced in the CC, but the narrow circle of its application does not guarantee full protection of victims rights. Particular attention is paid to the possibility of introducing a new kind of damage conpensation in CC, the institute for punitive damages as in Anglo-American law. Author in the comparative analysis studies peculiarities of the punitive damages and demonstrates how it is being implemented both in the US and in European countries. The study concludes that the introduction of punitive damages identical to Annglo-Amercian system in RA Civil Code is not appropriate, but the introduction of preventive damage which by its nature is similar to the Anglo-American punitive damage is possible, but at the same time will be different as the law will clearly define all possible limits and sizes based on which the courts will grant the right of preventive damage.

Բանալի բառեր՝ *վնաս, պատիժ, կանխարգելել, կանխում, հատուցում, ոչ նյութական վնաս:*
Ключевые слова: *вред, наказание, превенция, возмещение, нематериальный вред.*
Keywoards: *damage, punitive, prevent, compensate, non material damage.*